



**«ՔՐՈՍՍ ՀԻԹԵՔ» ՄԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ
ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ
(ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ՕՖԵՐՏԱ)**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն պայմաններով (այսուհետ նաև՝ Պայմաններ) սահմանում են «Քրոսս Հիթեք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ Օպերատոր) կողմից Բաժանորդներին մատուցվող հեռուստատեսային ծառայությունները (այսուհետ նաև՝ Ծառայություններ), Ծառայությունների մատուցման կարգը և պայմանները, ինչպես նաև Ծառայությունների մատուցման միջոցների, այդ թվում Ցանցային մեդիափլեյերի, օգտագործման կարգը:

1.2. Սույն պայմանները համարվում են հրապարակային օֆերտա՝ Օպերատորը հավաստում է իր կամքը սույն պայմաններում նշված պայմաններով յուրաքանչյուր արձագանքողի հետ կնքել հեռուստատեսային ծառայությունների մատուցման պայմանագիր:

1.3. Բաժանորդն ընդունում է սույն պայմանները անմիջապես Օպերատորին կամ «ԱրմենՏել» ՓԲԸ-ին Դիմում ներկայացնելով:

2. ՄԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

- **Բաժանորդ** – Օպերատորին կամ «ԱրմենՏել» ՓԲԸ-ին ամբողջությամբ լրացված Դիմում ներկայացրած անձ, պայմանով, որ տվյալ անձի կողմից օգտագործվող հեռուստացույցը, համակարգչային սարքավորումը, բջջային հեռախոսը կամ այլ սարքավորումը, որի միջոցով վերջինս ցանկանում է ստանալ Ծառայությունները գտնվում է Ցանցի հասանելիության տարածքում և Ցանցի բաղկացուցիչ մասը կազմող ենթակառուցվածքների և անձի կողմից օգտագործվող վերոնշյալ սարքավորումների միջև որևէ միջոցով միացումները չեն պահանջում Օպերատորի կողմից չհիմնավորված ծախսեր:

- **Ծառայություններ** – Օպերատորի կողմից Բաժանորդին տրվող որոշակի Սակագնային փաթեթից օգտվելու հնարավորություն:

- **Սակագնային փաթեթ** – Օպերատորի կողմից նախապես սահմանված Բաժանորդի կողմից հետվճարային կամ կանխավճարային եղանակով կատարվող վճարի դիմաց տրամադրվող որոշակի քանակի սարքերով որոշակի թվով հեռուստալիքների և այլ տեսաձայնային նյութեր դիտելու հնարավորության, ինչպես նաև որոշ դեպքերում նշված հեռուստալիքների և այլ տեսաձայնային նյութերի

առավել որակով դիտումն ապահովող սարքերի համախումբ: Սակագնային փաթեթների տեսակները թվարկվում են Օպերատորի պաշտոնական կայքի (www.ctv.am) համապատասխան բաժնում:

- **Դիմում** – սույն պայմանների անբաժանելի մաս կազմող թիվ 1 հավելվածով սահմանված դիմում, որը հավաստում է այն ներկայացնող անձի համաձայնությունը սույն պայմանների (հրապարակային օֆերտայի) հետ՝ հանդիսանում է այդ օֆերտան ընդունելու պատասխան (ակցեպտ):

- **Բաժանորդային պայմանագիր** – անձի կողմից Դիմում ներկայացնելու՝ օֆերտան ակցեպտավորելու արդյունքում Օպերատորի և Բաժանորդի միջև կնքված պայմանագիր:

- **Կողմ կամ Կողմեր** – Օպերատորը և Բաժանորդն առանձին կամ համատեղ հիշատակման դեպքում:

- **Ցանցային մեդիափյլեյեր** – Օպերատորի կողմից Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված սարք իր պատկանելիքներով, որոնց միջոցով Բաժանորդը հնարավորություն է ստանում օգտվել Ծառայություններից:

- **Վերջնակետային սարքավորում** – Բաժանորդի կողմից օգտագործվող սարքավորում /հեռուստացույց, համակարգչային սարքավորում, բջջային հեռախոս և այլ/, որը միացված է Օպերատորի ցանցին և հնարավորություն է տալիս Բաժանորդին ստանալ Ծառայությունները:

- **Օպերատորի ցանց (Ցանց)** – Օպերատորին պատկանող համակարգ և սարքավորումներ, որոնք տեխնիկապես հնարավոր են դարձնում Ծառայությունների մատուցումը: Նշված համակարգն իր մեջ ներառում է համապատասխան ենթակառուցվածքներ:

- **Ցանցային միացումներ** – Ցանցի բաղկացուցիչ մասը կազմող ենթակառուցվածքների և Վերջնակետային սարքավորման որևէ միջոցի միացումներ:

- **Ցանցի հասանելիության տարածք** – աշխարհագրական տարածքը, որտեղ Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները տեխնիկապես հասանելի են:

- **Հաշվետու ժամանակաշրջան** – ամիս, որի ընթացքում մատուցվել են Ծառայությունները:

- **Հաշվարկային համակարգ** – ավտոմատացված համակարգ, որի միջոցով հաշվառվում են Բաժանորդին մատուցված Սակագնային փաթեթի տեսակը, Բաժանորդների պարտքերը և ստացված վճարումները:

- **Զանգերի կենտրոն** – հարթակ, որի միջոցով Բաժանորդը զանգահարելով +374 60 488 999 հեռախոսահամարով կարող է ստանալ տեղեկություն Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ, խորհրդատվություն և տեխնիկական աջակցություն:

- **Տեխնիկական հնարավորություն** – Ծառայություններ մատուցելու Օպերատորի հեռահաղորդակցության ենթակառուցվածքներին միացման հնարավորություն:

- **Անձնական հաշիվ** – Հաշվարկային համակարգում վարվող Բաժանորդի դրամական միջոցների կուտակման հաշիվ, որն նաև օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար:

- **Դիմումի համար /ID/**– Բաժանորդի նույնականացման և Բաժանորդի կողմից իր անձնական հաշիվ մուտք գործելու ու վճարումներ կատարելու համար ծառայող տառերի և/կամ թվերի համախումբ:

3.ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Բաժանորդն իրավունք ունի՝

3.1.1. Օգտվել սույն պայմաններին համապատասխան իրեն մատուցվող ծառայություններից:

3.1.2. Սույն պայմաններին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունները /Սակագնային փաթեթ/:

3.1.3. Տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների /Սակագնային փաթեթների/, գանձված գումարների և Անձնական հաշվի ընթացիկ մնացորդի մասին:

3.1.4. Միակողմանի կասեցնել Ծառայությունների մատուցումը սույն պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:

3.1.5. Միակողմանի լուծել Բաժանորդային պայմանագիրը սույն պայմաններով սահմանված դեպքերում և կարգով:

3.1.6. Պահանջել Օպերատորից պատշաճ կերպով կատարել սույն պայմաններով ստանձնած պարտավորությունները:

3.2. Բաժանորդը պարտավոր է՝

3.2.1. Բաժանորդային պայմանագրի կնքումից հետո, Ցանցային միացումներ, ընթացիկ կամ այլ տեխնիկական սպասարկում իրականացնելու նպատակով կամ սույն պայմաններով նախատեսված դեպքում սարքն ապամոնտաժելու նպատակով մոտեցած Օպերատորի աշխատակիցներին տրամադրել համապատասխան վերոնշյալ միջոցառումները իրականացնելու համար անհրաժեշտ տարածք, ինչպես նաև այլ կերպ աջակցել Օպերատորի աշխատակիցներին վերոնշյալ միջոցառումների իրականացման ընթացքում:

3.2.2. Օգտվել Ծառայություններից բացառապես անձնական նպատակներով: Բաժանորդն իրավունք չունի որևէ միջոցով վերահեռարձակել, սեփական կամ այլ անձանց ձեռնարկատիրական կամ այլ նպատակներից էլնելով օգտագործել իրեն մատուցվող ծառայությունները, ինչպես նաև օգտագործել դրանք Օպերատորի շահերին հակասող որևէ այլ կերպ:

3.2.3. Պայմաններով սահմանված կարգով կատարել վճարումներ՝ Օպերատորի կողմից մատուցված Ծառայություններից օգտվելու համար:

3.2.4. Ինքնուրույն չիրականացնել և չթույլատրել Օպերատորին չներկայացնող անձանց տեղադրել, կարգավորել, իրականացնել որևէ վերանորոգման, տեխնիկական սպասարկման աշխատանքներ, տեղափոխել և ապամոնտաժել Ցանցային մեդիափիլեյերը կամ որևէ այլ սարքավորում, որը կազմում է Օպերատորի ցանցի բաղկացուցիչ մաս:

3.2.5.Անհապաղ տեղեկացնել Օպերատորին Ծառայությունների մատուցման հետ կապված ցանկացած վթարային իրավիճակի, կապի խաթարման, վատթարացման մասին:

3.2.6.Որևէ կերպ չտրամադրել /չփոխանցել/ երրորդ անձանց Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները, իր ստանձնած իրավունքները և պարտականությունները:

3.2.7.Չօգտագործել իրեն տրամադրված Ցանցային մեղիափիլեյերը անհամատեղելի այլ սարքավորումների հետ և որևէ այլ եղանակով, որը կարող է վնասել Օպերատորի ցանցին կամ Ցանցային մեղիափիլեյերի անխափան աշխատանքին: Օպերատորը չի կրում որևէ պատասխանատվություն այդպիսի օգտագործման արդյունքում Բաժանորդին կամ որևէ այլ անձանց պատճառված վնասի համար: Բաժանորդին տրամադրված Ցանցային մեղիափիլեյերի և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումների և նյութերի միջոցով երրորդ անձանց կողմից Ծառայությունների ցանկացած օգտագործման համար, ինչպես նաև Բաժանորդին տրամադրված Ցանցային մեղիափիլեյերի և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումների և նյութերի՝ երրորդ անձանց կողմից ոչ պատշաճ օգտագործման հետևանքների համար պատասխանատվություն է կրում Բաժանորդը:

3.2.8.Օպերատորի կողմից իրեն տրամադրված Ցանցային մեղիափիլեյերը, ինչպես նաև այլ սարքավորումները և Ցանցային միացումը ապահովումը պահպանող նյութերը պահպանել պատշաճ և սարքին վիճակում, դրան վերաբերվել խնամքով, զերծ մնալ դրա ոչ պատշաճ օգտագործումից, անհապաղ տեղեկացնել Օպերատորին Ցանցային մեղիափիլեյերի կորստի կամ հափշտակման մասին: Ցանցային մեղիափիլեյերի, հափշտակության կամ վնասման դեպքում Բաժանորդին նոր Ցանցային մեղիափիլեյերի տրամադրումը հնարավոր է միայն Բաժանորդի կողմից հին Ցանցային մեղիափիլեյերի համար փոխհատուցում վճարելուց հետո:

3.2.9.Բաժանորդային պայմանագրի լուծման դեպքում, անկախ լուծման պատճառներից, Ցանցային մեղիափիլեյերը, ինչպես նաև դրա պատկանելիքներն ու մասերը 7/յոթ/ օրացուցային օրվա ընթացքում վերադարձնել Օպերատորին սարքին վիճակում՝ հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը:

3.3. Օպերատորը պարտավորվում է՝

3.3.1.Մատուցել Ծառայությունները:

3.3.2.Ծառայություններից օգտվելու համար Բաժանորդի մոտ համապատասխան սարքի բացակայության պարագայում վերջինիս հատկացնել Ցանցային մեղիափիլեյերը և կատարել համապատասխան միացումներ Բաժանորդային պայմանագրի կնքումից առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում: Ցանցային մեղիափիլեյերը և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումները և նյութերը հանձնվում են Բաժանորդի օգտագործմանը, որի վերաբերյալ Կողմերի միջև կնքվում է նշված հանգամանքը հավաստող հանձման-ընդունման ակտ: Համապատասխան հանձման-ընդունման ակտ Կողմերի միջև կնքվում է նաև սույն պայմաններով նախատեսված դեպքերում Ցանցային մեղիափիլեյերի և Բաժանորդի օգտագործմանը հանձնված այլ սարքավորումների և նյութերի ապամոնտաժման (անջատման) դեպքում: Ցանցային մեղիափիլեյերի և/կամ Բաժանորդի օգտագործմանը հանձնվող այլ սարքավորումների և նյութերի ոչ պատշաճ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին նշված Ցանցային մեղիափիլեյերի և Բաժանորդի օգտագործմանը հանձնվող այլ սարքավորումների և նյութերի Բաժանորդին հանձնելու փաստը հավաստող հանձման-ընդունման ակտը Կողմերի կողմից ստորագրվելու պահից և համապատասխանաբար փոխանցվում է Օպերատորին նշված Ցանցային մեղիափիլեյերի և Բաժանորդի

օգտագործմանը հանձնված այլ սարքավորումների և նյութերի Օպերատորին վերադարձնելու (փոխանցելու) փաստը հավաստող հանձման-ընդունման ակտը Կողմերի կողմից ստորագրվելու պահից:

3.3.3. Առանց որևէ լրացուցիչ վճարի փոխարինել Բաժանորդին տրամադրված Ցանցային մեղիափիլեյերը և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումները և նյութերը նոր Ցանցային մեղիափիլեյերով և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումներով և նյութերով, եթե Օպերատորի կողմից հայտնաբերվել են իր իսկ կողմից իսկզբանե տրամադրված Ցանցային մեղիափիլեյերի և Ցանցային միացումն ապահովող այլ սարքավորումների և նյութերի արտադրական թերություններ:

3.3.4. Բաժանորդին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ Օպերատորի ցանցի հասանելիության, Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային փաթեթով նախատեսված Ծառայությունների առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայությունների մատուցման պայմանների մասին:

3.3.5. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն ապահովելու համար իր կողմից մատուցվող Ծառայությունների պատշաճ որակը և անխափանությունը 24 ժամյա ռեժիմով:

3.3.6. Պատշաճ և ճշգրիտ կերպով վարել յուրաքանչյուր Բաժանորդի Անձնական հաշիվը:

3.3.7. Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող 10 օրացուցային օրվա ընթացքում ամփոփել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում Ծառայությունների համար վճարման ենթակա գումարի չափը և այն հասու դարձնել Բաժանորդին:

3.3.8. Ծառայությունների մատուցման ամբողջ ընթացքում ապահովել Ծառայությունների մատուցման համար միջոց հանդիսացող ամբողջ սարքավորման տեխնիկական սպասարկումը, այդ թվում Ցանցի և Ցանցային մեղիափիլեյերի: Բաժանորդի մեղքով առաջացած անսարքությունների վերացման համար Բաժանորդից կարող է գանձվել լրացուցիչ վճար, որը չի կարող գերազանցել անսարքության վերացման համար ծախսված գումարի և նյութերի արժեքը:

3.4. Օպերատորը իրավունք ունի՝

3.4.1. Ինքնուրույն, սեփական հայեցողությամբ սահմանել և ժամանակ առ ժամանակ փոփոխել Սակագնային փաթեթները, դրանց մատուցման պայմանները, կանոնները և սակագները:

3.4.2. Կարճաժամկետ սահմանափակում կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ ելնելով տեխնիկական անհրաժեշտությունից:

3.4.3. Սույն պայմաններով սահմանված դեպքերում կասեցնել Ծառայությունների մատուցումը:

3.4.4. Միակողմանի կասեցնել, լուծել Բաժանորդային պայմանագիրը և ապամոնտաժել իր կողմից տեղադրված ամբողջ սարքավորումները, այդ թվում Ցանցային մեղիափիլեյերը, ինչպես նաև Ցանցի բաղկացուցիչ մաս կազմող մալուխները, լարերը և այլն, եթե Բաժանորդը թույլ է տվել սույն Բաժանորդային պայմանագրի խախտում:

4. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՌԵԺԻՄԸ

4.1. Օպերատորը Ծառայությունները մատուցում է շուրջօրյա (շաբաթը յոթ օր, օրը քսանչորս ժամ) ռեժիմով՝ առանց ընդհատումների, բացառությամբ պլանային և արտահերթ տեխնիկական աշխատանքներ անցկացնելու դեպքերի, որոնց մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է տեղեկացնի Բաժանորդներին իր Պաշտոնական վեբ կայքում համապատասխան հայտարարություններ անելու միջոցով: Ծառայությունների մատուցումը կարող է ժամանակավորապես ընդհատվել կապված սույն պայմանների 4.3. կետում նկարագրված գործողությունների հետ:

4.2. Մատուցվող Ծառայությունների որակը և ծավալը կարող է սահմանափակվել Օպերատորի կողմից՝ սույն Պայմանների և Օպերատորի կողմից սահմանված այլ կանոնների համաձայն:

4.3. Ցանցի ընդլայնման աշխատանքների կատարմամբ պայմանավորված՝ Օպերատորը, նախապես Պաշտոնական վեբ կայքում համապատասխան տեղեկություն զետեղելուց հետո, իրավունք ունի ժամանակավորապես դադարեցնել Ծառայությունների մատուցումը:

4.4. Ծառայությունների մատուցման թերությունների վերացման ծախսերը կրում է Բաժանորդը, եթե թերություններն առաջացել են Բաժանորդի մեղքով:

5. ԿՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Ծառայությունների դիմաց վճարը կարող է կատարվել Բաժանորդի կամ վերջինիս կողմից լիազորված անձի կողմից:

5.2. Ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են կանխավճարային կամ հետվճարային տարբերակով պայմանավորված Բաժանորդի կողմից ընտրված փաթեթով:

5.3. Ծառայությունների դիմաց վճարը հետվճարային տարբերակով կատարվելու դեպքում Բաժանորդի կողմից պետք է իրականացվի մինչև Ծառայությունների մատուցման ամսվան հաջորդող ամսի 15-ը:

5.4. Կանխավճարային եղանակով Ծառայությունների դիմաց վճարելու դեպքում Ծառայությունները մատուցվում են Անձնական հաշվում առկա միջոցների սահմաններում:

5.5. Կանխավճարային եղանակով վճարումները ենթակա չեն վերադարձման, բացառությամբ այն դեպքերի, երբ Ծառայությունների մատուցումը հնարավոր չէ Օպերատորի մեղքով:

5.6. Օպերատորի կողմից որոշված Սակագնային փաթեթներին Բաժանորդները կարող են միանալ միայն համապատասխան կոնկրետ ժամանակահատվածով բաժանորդագրվելու դեպքում, ինչի մասին գրառում է կատարվում Օպերատորի պաշտոնական կայքի համապատասխան հատվածում և ինչի մասին Դիմում ներկայացնելու ցանկություն ունեցող անձը զգուշացվում է նախքան Դիմումի ստորագրումը:

5.7. Ծառայությունների դիմաց հետվճարային /տարեկան բաժանորդագրման դեպքում՝ նաև կանխավճարային/ եղանակով վճարման եղանակը ընտրելու դեպքում, Բաժանորդն իրավունք ունի 15-օրյա ժամկետում միակողմանի լուծել պայմանագիրը չվճարելով որևէ տույժ ու տուգանք:

5.8. Սույն պայմանների 5.7. կետում հիշատակված Սակագնային փաթեթի ընտրության և Բաժանորդի կողմից նույն կետում հիշատակված ժամանակահատվածից հետո ծառայություններից հրաժարվելու դեպքում՝ Բաժանորդը պարտավոր է վճարել տուժանք՝ ամսական բաժանորդագրման դեպքում տվյալ ամսվա վճարի, իսկ տարեկան բաժանորդագրման դեպքում՝ 12,000 ՀՀ դրամի չափով: Ընդ որում, Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի կողմից տարեկան բաժանորդագրման ժամանակահատվածում հերթական վճարման կետանցը մեկնաբանել որպես ծառայություններից հրաժարում և համարել պայմանագիրը լուծված:

5.9.Սակագնային փաթեթները կարող են Օպերատորի կողմից միակողմանիորեն փոփոխվել: Օպերատորը Սակագնային փաթեթների փոփոխության մասին Բաժանորդներին տեղեկացնում է ոչ ուշ, քան նոր Սակագնային փաթեթների ներդրումից 15 /տասնհինգ/ օր առաջ, բացառությամբ այն դեպքերի և Սակագնային փաթեթների փոփոխության արդյունքում Բաժանորդներին մատուցվող Ծառայությունների պայմանները բարելավվում են, նշված դեպքերում Օպերատորը պարտավոր է Բաժանորդներին տեղեկացնել ոչ ուշ, քան նոր Սակագնային փաթեթների կիրառման օրվանից 3 /երեք/ օր առաջ:

5.10.Սույնով Բաժանորդը տալիս է իր համաձայնությունը Օպերատորին սխալ վճարումը փոխանցել Բաժանորդի հաշվից՝ ճիշտ հասցեատիրոջը:

5.11.Օպերատորը Բաժանորդի հաշվի, ինչպես նաև նրան մատուցված Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունը պարտավոր չէ պահպանել 1 (մեկ) տարուց ավելի, որից հետո Օպերատորը կարող է մերժել Բաժանորդին նրա հաշվի կամ նրան մատուցված Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՄԵՑՈՒՄԸ ԵՎ ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԼՈՒԾՈՒՄԸ

6.1.Բաժանորդային պայմանագրով մատուցվող ծառայությունները կարող են ժամանակավորապես կասեցվել կամ Բաժանորդային պայմանագիրը կարող է լուծվել Օպերատորի, Բաժանորդի կամ Կողմերի համաձայնությամբ:

6.2.Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրով մատուցվող Ծառայությունները կարող են կասեցվել, Բաժանորդային պայմանագիրը կարող է լուծվել սույն պայմանների 3.2. կետում նշված պարտավորությունները Բաժանորդի կողմից չկատարելու դեպքում:

6.3.Օպերատորի կողմից Բաժանորդային պայմանագրով մատուցվող Ծառայությունները կարող են կասեցվել նաև ընթացիկ և արտահերթ տեխնիկական (պրոֆիլակտիկ) աշխատանքների անցկացման ամբողջ ընթացքում, Ցանցային մեղիափլեյերի, այլ Ցանցային միացումն ապահովող սարքերի և նյութերի կորստի, հափշտակման կամ անսարքության արդյունքում:

6.4.Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագիրը առանց որևէ տուժանքի կամ այլ վճարման կատարման կարող է լուծվել սույն պայմանների 3.3. կետում նշված պարտավորությունները Օպերատորի կողմից այդ պարտավորության կատարման համար սահմանված ժամկետում, իսկ այդպիսին չլինելու դեպքում ողջամիտ ժամկետում չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում: Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագիրը առանց որևէ տուժանքի կամ այլ վճարման կատարման կարող է լուծվել նաև այդ մասին Օպերատորին առնվազն 20 օր շուտ ծանուցելու դեպքում, բացառությամբ սույն պայմանների 5.7. կետում նշված Սակագնային փաթեթով Բաժանորդային պայմանագրի կնքման դեպքում:

6.5.Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրով մատուցվող Ծառայությունները կարող են կասեցվել առավելագույնը երկամսյա ժամկետով՝ Օպերատորին առնվազն 3 օր շուտ ծանուցելու դեպքում:

6.6.Բաժանորդի կողմից Ծառայությունների մատուցումը ավելի քան երկամսյա ժամկետով կասեցնելու ցանկության դեպքում պարտավոր է վերադարձնել Ցանցային մեղիափլեյերը, այլ Ցանցային միացումն ապահովող սարքերը և նյութերը 7 աշխատանքային օրվա ընթացքում:

6.7.Բաժանորդը պարտավոր է վերադարձնել Ցանցային մեղիափլեյերը, այլ Ցանցային միացումն ապահովող սարքերը և նյութերը այն վիճակում, ինչ վիճակում դրանք ստացել էր Օպերատորից՝ հաշվի առնելով դրանց բնականոն մաշվածությունը: Ցանցային մեղիափլեյերը, այլ Ցանցային միացումն ապահովող սարքերը և նյութերը Բաժանորդի կողմից Օպերատորին Պայմաններին համապատասխան վերադարձնելու փաստը հաստատվում է Կողմերի միջև կազմված հանձնման-ընդունման ակտով:

6.8. Բաժանորդը չի կարող միակողմանի հրաժարվել ծառայությունների ընդունումից և լուծել պայմանագիրը, քանի դեռ չի վերադարձրել Ցանցային մեդիափիլեյերը, այլ սարքերը և նյութերը այն վիճակում, ինչ վիճակում դրանք ստացել էր Օպերատորից՝ հաշվի առնելով դրանց բնականոն մաշվածությունը

7. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

7.2. Կողմերը սույնով հրաժարվում են միմյանց անուղղակի վնասների և բաց թողնված օգուտների հատուցման պահանջներից: Ցանկացած պարագայում Օպերատորի պատասխանատվությունը յուրաքանչյուր Բաժանորդի մասով չի կարող գերազանցել Բաժանորդին մատուցվող Ծառայությունների դիմաց տվյալ ամսվա համար վճարված գումարը:

7.3. Օպերատորը պատասխանատվություն չի կրում՝

- երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Օպերատորի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:
- սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:
- Աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, Ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման, հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար, եթե դրանք չեն գերազանցում ամսական 24 (քսանչորս) ժամը:
- Բաժանորդին պատկանող սարքավորման/ուսման անսարքության պատճառով Ծառայությունների անպատշաճ մատուցման կամ ընդհատման համար:
- իր կողմից Բաժանորդին մատուցվող Ծառայությունները երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

7.4. Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված Ցանցային մեդիափիլեյերի, այլ Ցանցային միացումն ապահովող սարքերի և նյութերի վնասման կամ կորստի դեպքում Բաժանորդը պատասխանատվություն է կրում համապատասխանաբար վնասի կամ կորստի չափով:

7.5. Բաժանորդը պատասխանատվություն է կրում Օպերատորի կողմից իրեն մատուցվող Ծառայությունները երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

7.6. Բաժանորդը հանդիսանում է Օպերատորի համար միակ պատասխանատուն՝ սույն Պայմաններով ստանձնած իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

7.7. Պայմանների 6.7. կետում նշված պարտականությունը Բաժանորդի կողմից չկատարվելու դեպքում Օպերատորն իրավունք ունի բաժանորդից պահանջել վճարել տույժ՝ 50,000 (հիսուն հազար) ՀՀ դրամի չափով:

8. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ

8.1. Օպերատորը Բաժանորդների անհատական տվյալները, նրանց կողմից օգտագործվող Ծառայությունների տեսակի, արժեքի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված գաղտնի համարվող տեղեկությունները գաղտնի է պահում՝ բացառությամբ Պայմաններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

8.2.Օպերատորն իրավունք ունի բացահայտել Պայմանների 12.1. կետով նախատեսված տեղեկությունները՝

8.2.1. Առանց Բաժանորդի թույլտվության, երբ դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, կամ

8.2.2. Բաժանորդի գրավոր համաձայնության հիման վրա, կամ

8.2.3. Եթե բացահայտումն անհրաժեշտ է Օպերատորի իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության համար:

8.3. Օպերատորի աշխատակցի և Բաժանորդի հեռախոսագրույցը կարող է ձայնագրվել Օպերատորի կողմից:

9. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

9.1.Սույն Պայմանների կատարումից բխող Կողմերի միջև ծագած վեճերը, տարաձայնությունները Կողմերը լուծում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով վեճի չկարգավորման պարագայում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

10.ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ /ՖՈՐՄ-ՄԱԺՈՐ/

10.1.Կողմերը պատասխանատվություն չեն կրում իրենց պարտավորություններն ամբողջությամբ կամ մասամբ չկատարելու կամ դրանց կատարումն ուշացնելու դեպքում, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է Բաժանորդային պայմանագիրը կնքելուց հետո, և որը Օպերատորը կամ Բաժանորդը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Մասնավորապես, այդպիսի իրավիճակների շարքին, առանց սահմանափակման, կարող են դասվել՝ երկրաշարժը, սողանքը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, մայրուղային ենթակառուցվածքների խաթարումը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից ընդունված ակտը և այլն, որոնք անհնար են դարձնում Բաժանորդային պայմանագրով պարտավորությունների կատարումը: Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի միակողմանիորեն հրաժարվել պայմանագրի կատարումից, եթե ֆորս-մաժորային իրավիճակը շարունակվում է երեք ամսից ավելի:

11. ԵԶՐԱՓՈՒԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

11.1.Բոլոր այն տեղեկությունները, որոնք Օպերատորը պարտավոր է տրամադրել Բաժանորդին, զետեղվում են Օպերատորի պաշտոնական վեբ կայքում:

11.2.Այն դեպքում, երբ Բաժանորդը պարտավոր է գրավոր ծանուցում ուղարկել Օպերատորին, գրավոր ծանուցումը ուղարկվում է փոստով՝ պատվիրված նամակով Պայմաններում կամ Պաշտոնական վեբ կայքում նշված հասցեով:

11.3.Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացված տվյալների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավոր է 10 օրացուցային օրվա ընթացքում այդ մասին հայտնել Օպերատորին և ներկայացնել նոր տվյալները հավաստող փաստաթղթերը:

11.4.Սույն Պայմանները մեկնաբանվում են ՀՀ գործող օրենսդրությանը համապատասխան: Սույն Պայմաններով չկարգավորված կողմերի փոխհարաբերությունները կարգավորվում են ՀՀ գործող օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.5.Սույն պայմանները կազմված են հայերեն լեզվով, սակայն կարող են թարգմանվել և հրապարակվել Օպերատորի պաշտոնական վեբ կայքում նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ տարբերակների միջև հակասության դեպքում նախապատվությունը տրվելու է հայերեն տարբերակին:

12.ՕՊԵՐԱՏՈՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Քրոսս Հիթեք» ՍՊԸ

Իրավաբանական հասցե՝ ք. Երևան, Կորյունի 7, գր. 3

ՀՎՀՀ՝ 01550494

Հեռ.՝ +374 60 488 999

Էլ. փոստ՝ info@ctv.am

Տնօրեն՝ Շանթ Քարամյան